**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2**
**«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-24/03» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ**
**Մեկնարկ «29» նոյեմբերի 2024թ.**
**ժամը՝ 11:00**
**Ավարտ «27» դեկտեմբերի 2024թ.**
**ժամը՝ 12:30**

Նիստի անցկացման վայրը՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1

***Մասնակցում էին՝***

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության շահագործման ծառայության պետ, գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետի պարտականությունները կատարող — Ա. Ասատրյան

**Հանձնաժողովի անդամներ՝**

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության տեխնիկական հսկողության և աշխատանքի անվտանգության բաժնի պետ — Վ. Վարժապետյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության շահագործման ծառայության ներդրումային ծրագրերի իրականացման գծով ճարտարագետ — Ա. Սարգսյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիսարևելյան» տեղամասի հաշվապահ-գործավար — Ա. Առաքելյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ — Տ. Ներսիսյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության շահագործման ծառայության ներդրումային ծրագրերի իրականացման գծով ճարտարագետ — Գ. Մանուկյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության ծրագրերի իրականացման ծառայության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ — Ն. Կիրակոսյան

***<u>Նախաորակավորման ընթացակարգի հայտերի բացման մասին</u>***

(Ա. Ասատրյան)

**1.1** «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից կազմակերպված «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-24/03» ծածկագրով նախաորակավորման ընթացակարգի շրջանակներում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N/N | Մասնակցի անվանումը | ՀՎՀՀ | Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1 | «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ և «Գեոմափիս» ՍՊԸ կոնսորցիում | 02830174<br>0112398 | info@etk.am<br>info@geomapis.com |
| 2 | «ԻՆՏԵՐԳԵՈՏԷԿ» ՍՊԸ և «ԷՅ ԷՄ Թի Քոնսալթինգ» ՍՊԸ կոնսորիում | 07618744<br>03550425 | info@igt.am,<br>yerak.tenders@gmail.com<br>davidsoghomonyan87@gmail.com |

*Ընդունել որոշում՝ կողմ-6, դեմ-0*

## 2. Տեղեկություն նախաորակավորման հայտարարության վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Ասատրյան)

**2.1** «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-24/03» ծածկագրով նախաորակավորման հայտարարության վերաբերյալ 22.11.2024թ. ստացվել է հարցադրում և դրա վերաբերյալ 25.11.2024թ. տրամադրվել է պարզաբանում.

Հարցադրում N 1

Արդյո՞ք ընդունելի է Տեղագրական հանութագրումը իրականացնել լազերային սկանավորման եղանակով չսահմանափակվելով Տեխնիկական առաջադրանքում նշված 2 մեթոդներով՝ էլեկտրոնային տախեոմետրով կամ GPS ընդունիչով: Լազերային սկանավորումը թույլ է տալիս ստանալ տեղանքի ռելիեֆը և հանութագրման ենթակա այլ տարրերը բարձր ճշտությամբ:

Պարզաբանում N 1

Այո, ընդունելի է:

Հարցադրում N 2

Պաշտոնական հրապարակված տեղագրական հատակագծերը շատ դեպքերում չեն համապատասխանում առկա իրադրության հետ քանի որ դրանց կազմումից և հրապարակումից անցել է բավականին երկար ժամանակ, և ընթացիկ փոփոխությունները արտապատկերված չեն այդ քարտեզներում: Հաշվի առնելով վերոգրյալը, անհնար է դառնում նոր ստեղծվող քարտեզագրական նյութի բովանդակության համաձայնեցումը այդ քարտեզների հետ:

Պարզաբանում N 2

Նշված կետը հարցադրում չի պարունակում, հետևաբար պարզաբանման ենթակա չէ:

Հարցադրում N 3

Կադաստրի կոմիտեի կողմից ՕԳ-ների գրանցումը կարող է ձգձգվել անկախ աշխատանքների կատարման որակից և կազմված փաթեթների ճշգրտության աստիճանից, օրինակ՝ նախորդ նախագծերի փորձառությունից կարող ենք նշել, որ Կադաստրի կոմիտեի կողմից շատ հաճախ օբյեկտների գրանցման համար պահանջվում են իրավահաստատող փաստաթղթեր կամ այնպիսի հիմքեր, որոնք հնարավոր է պատվիրատուի մոտ բացակայեն, և այդ պատճառաբանությամբ գործի ընթացքը կասեցվում է: Այլ օրինակ է, երբ պետական գրանցումը կասեցվում է գործը դատական մարմիններում քննարկման պատճառաբանությամբ: Խնդրի հասցեագրումը կարևոր է, քանի որ կասեցման պատճառները կարող են էական նշանակություն ունենալ պետական գրանցման առումով, սակայն դրանք դուրս են Կատարողի լիազորությունների շրջանակից: Այդ պատճառով խնդրահարույց է աշխատանքների կատարումն ուղղակիորեն կապել պետական գրանցման վկայականի տրամադրման հանգամանքի հետ: Միաժամանակ առաջարկում ենք աշխատանքները պատշաճ իրականացնելու դեպքում սահմանել մեկ տարի երաշխիքային ժամկետ, որպեսզի հետագա փաստաթղթաշրջանառությունը Կատարողի և Կադաստրի կոմիտեի միջև կանոնակարգված լինի:

Պարզաբանում N 3

Նշված կետը հարցադրում չի պարունակում, հետևաբար պարզաբանման ենթակա չէ:
*Ընդունել որոշում՝ կողմ-6, դեմ-0,*

3. **Տեղեկատվություն՝ փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**
(Ա. Ասատրյան)

**3.1** Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է հետևյալը.

**«ԻՆՏԵՐԳԵՈՏԷԿ» ՍՊԸ և «ԷՅ ԷՄ ԹԻ Քոնսալթինգ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում.**

- **«Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին** իր համապատասխանությունը հավաստելու նպատակով մասնակիցը ներկայացրել է պայմանագրեր, որոնցից.
- 2023 թվականի սեպտեմբերի 7-ին կնքված ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-23/01 ծածկագրով պայմանագրում բացակայում են պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը,
- 2024 թվականի հուլիսի 5-ի ք. Երևան, Պուշկինի 56/1 շենքի ներքին չափագրման աշխատանքների պայմանագրում կան մի շարք անհամապատասխանություններ՝ կապված պայմանագրի կողմի ( նշված է ԷՄ ՋԻ Դիզայն) և հաշիվ -ապրանքագրի հետ:
- ներկայացված պայմանագրերում «հասցեների իրավունքի պետական գրանցման դիմումի ներկայացման» առարկան նմանատիպ չէ:
- 2023 թվականին «Սոլար Սիթի» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրերը նշագրված են տարբեր ամսաթվերով, այնինչ երկու պայմանագրերն էլ բովանդակային առումով նույնն են և իրարից չեն տարբերվում:
- որպես նմանատիպ համարվող պայմանագրերի հանրագումարը գումարային արտահայտությամբ պակաս է հրավերով սահմանված՝ 41 833 400 (քառասունմեկ միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ չափից:
- **Հավելված 2-ի** աղյուսակի «պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալներ» սյունակում բացակայում են պատվիրատուի հետ կապ հաստատելու տվյալները:
- **«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին** իր համապատասխանությունը հավաստելու նպատակով չի ներկայացվել որպես

քարտեզագրող ներկայացված Անախասյան Սուսաննայի և որպես գեոդեզիստ Ամիրաղյան Արթուրի լիազոր մարմնի կողմից տրված որակավորման վկայականները:

**«Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ և «Գեոմափիս» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում**

-բացակայում են պայմանագրի կատարման համար պահանջվող էլեկտրական տախեոմետրերի և Արբանյակային դիրքորոշման (GPS) արդիական ստուգաչափման հավաստագրերը,

- բացակայում են Պայմանագիր N014-24-AIA և N002-21-AIA պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ 02.12.2024 թվականին ընթացակարգը կասեցնել և առաջարկել մասնակիցներին ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 03.12.2024 թվականը ներառյալ/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-24/03» ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի narine.kirakosyan@hven.am էլ. փոստին:

**3.2** Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հայտերի գնահատման նիստ հրավիրել 04.12.2024 թվականին ժամը 10:00-ին:

***Ընդունել որոշում՝ կողմ-6, դեմ-0***

**04.12.2024 թվականին ժամը 10:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները**

## 4. <u>Տվյալներ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին</u>

(Ա. Ասատրյան)

**4.1** Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակիցներ **«Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ և «Գեոմափիս» ՍՊԸ կոնսորցիումի** և **«ԻՆՏԵՐԳԵՈՏԵԿ» ՍՊԸ և «ԷՅ ԷՄ ԹԻ Քոնսալթինգ» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացվել են արձանագրությամբ պահանջվող փաստաթղթերը:

**4.2** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը գնահատող հանձնաժովը որոշեց պատճառաբանված որոշմամբ պայմանավորված՝ ստուգել մասնակցի

ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը:

**4.3** Նիստն ընդհատել մինչև համապատասխան մարմնից գրավոր եզրակացության ստացման հաջորդ օրը, ժամը 14:30-ն:

***Ընդունել որոշում՝ կողմ-6, դեմ-0***

**27.12.2024 թվականին ժամը 14:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:**

5. ***Իրավասու մարմնի կողմից ստացված եզրակացության,նախաորակավորված մասնակիցների ցանկը հաստատելու մասին***

(Ա. Ասատրյան)

**5.1** Ընդունել ի գիտություն , որ սույն թվականի դեկտեմբերի 26-ին իրավասու մարմնի կողմից ստացված գրության հիման վրա, հաստատվել է մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկությունը:

**5.2** «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ «ԻՆՏԵՐԳԵՈՏԵԿ» ՍՊԸ և «ԷՅ ԷՄ ԹԻ Քոնսալթինգ» ՍՊԸ և «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ և «Գեոմափիս» ՍՊԸ կոնսորցիումների հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

**5.3** Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի նախաորակավորված մասնակիցների ցանկը.

| **Գծային ենթակառուցվածքների քարտեզագրման, հանութագրման ծառայություններ** | |
|---|---|
| Նախաորակավորված մասնակցի անվանումը | Հայտ ներկայացրած, սակայն չնախաորակավորված մասնակցի անվանումը |
| «ԻՆՏԵՐԳԵՈՏԵԿ» ՍՊԸ և «ԷՅ ԷՄ ԹԻ Քոնսալթինգ» ՍՊԸ կոնսորցիում | |
| «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ և «Գեոմափիս» ՍՊԸ կոնսորցիում | |

Գնահատող հանձնաժողովի նիստին ներկա գտնվող «ԻՆՏԵՐԳԵՈՏԵԿ» ՍՊԸ և «ԷՅ ԷՄ ԹԻ Քոնսալթինգ» ՍՊԸ կոնսորցիումի և «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ և «Գեոմափիս» ՍՊԸ կոնսորցիումի ներկայացուցիչները, որոնք նախապես պահանջել և ստացել էին միմյանց որակավորման փաստաթղթերը, տրվել է իրենց նկատառումներն արտահայտելու հնարավորություն: Վերը նշված ներկայացուցիչների կողմից մյուս մասնակցի որակավորման փաստաթղթերի վերաբերյալ որևէ առարկություն չի ներկայացվել:

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

-Հաստատել բաց մրցույթի հայտարարության և հրավերի տեքստը

-Սույն արձանագրության հետ միասին էլեկտրոնային ձևով նախաօրակավորված մասնակիցներին տրամադրել նաև բաց մրցույթի հրավերը:

***Ընդունել որոշում՝ կողմ-6, դեմ-0***

## 6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ասատրյան)

6.1 «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բաց մրցույթի հայտերի բացման օրը՝ ժամը 11:00-ին:

***Ընդունել որոշում՝ կողմ-6, դեմ-0***

**Գնահատող հանձնաժողովի** Արամ Ասատրյան

**Հանձնաժողովի անդամներ՝** Վահրամ Վարժապետյան

Արփի Սարգսյան

Գևորգ Մանուկյան

Տիգրան Ներսիսյան

Արման Առաքելյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Նարինե կիրակոսյան